

ԵՐԵՎԱՆԻ ԵՐԵՄԵՅԵԱՆ ԳԵՂԱՐՈՒՄԻ ՏԱՐԻ

ՄԵԼԻԿ

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐՇԵՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 բուրլի. կէս տարեկանը 6 բուրլ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлис, редакция «Мелік».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆ. № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կէրակէ և առն օրերէն).

Շաբաթադրութիւնը ընդունվում է ամէն լիզուով.

Շաբաթադրութիւնները համար վճարում են
խմբագրութիւնը տողատեղին 10 կոպէկ.
Տէլէֆ. № 253.

Այսօր, հինգշաբթի, սեպտեմբերի 29-ին, գեներալ լեյտենանտ ՆԻԿԻՏ ԳՐԻԳՈՐԻԵՎԻՉ ԶԱՆՆԱԶԱՐԱՆՈՒՄԻ

ժամկան բաւատունքի օրը ժամը 11-ին, ս. պատարագից յետոյ, կը կատարվի հոգեհանգիստ Միխայիլովիչի փողոցի վրա գտնվող Թանգոյեան ս. Աստուածածնի եկեղեցում, որի մասին կինը և երեխաները ծանուցանում են ազգականներին և ծանօթներին:

ՔՈՒՄԵՆԿԱԿՈՒԹԻՒՆ

Միասնակեցութեան պահանջը.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ընթերցողի օրագիրը. Մաքեր և փառաբեր. Բուրժուազիայի շահերը և աղմուկաւորացիան. Տեղեկութիւններ գաւառից. Անցեալից մի յիշողութիւն. Մեր շուկայի կարգերը. Նամակներ Կարսից, Պետերբուրգից, Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Տեղեկութիւններ Պարսկաստանից. — ՀԵՌԱԳԻՐ.—ՏԱՆՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

ՄԻԱՍՆԱԿԵՑՈՒԹԻՒՆ ՊԱՆԱՆՁԸ

Իւրաքանչիւրը մեզինք մի հարց է տալիս, թէ ինչ պէտք է լինի հայերի և թուրքերի փոխադարձ թշնամութեան և միմեանց դէմ մաքառման վախճանը: Ոչ թուրքը կարող է ոչնչացնել հային և ոչ էլ հայը թուրքին:

Այդ երկու տարրերը չեն կարող մէկը միւսին վռնել երկրից և կազմել ամբողջ շրջաններ, բաղկացած կամ հայ կամ թուրք տարրից: Եւ, յամենայն դէպս, այնպիսի կենտրոններում, ինչպէս են մեծ քաղաքները և գործարանական շրջանները, միշտ խոնաված կը լինեն զանազան ազգութիւններ, որոնց շահերը խճճված կը լինեն և կը շօշափեն փոխադարձ յարաբերութիւններին խնդիրները:

Մենք լաւ գիտենք, որ մի քանի գիւղերում, որտեղ հայ և թուրք տարրերը ապրում են միասին, ինչպէս, օրինակ՝ Նախիջևանի, Զանգեզուրի և ուրիշ գաւառներում, կարելի կը լինի առանց շատ մեծ դժուարութեան ազգաբնակչութեան մասնաւոր փոխանակութիւն կազմել և, օրինակ, մի գիւղից, որ հայերը կազմում են փոքրամասնութիւն, տեղափոխել նորանց մի ուրիշ գիւղ, ուր թուրքերն են փոքրամասնութիւն կազմում և մէկը միւսով փոխարինելով դարձնել գիւղերը զուտ հայկական կամ զուտ թուրքական: Այդ հնարաւոր է իրագործել և անհրաժեշտ է իրագործել:

Եւ այդպիսի հարց դրված է եղել թէ ազգաբնակչութեան և թէ նոյն իսկ վարչական մարմիններին կողմից:

Գուցէ հնարաւոր լինի մի քանի բացառիկ դիրք ունեցող գիւղերի վերաբերութեամբ իրագործել և ամբողջ գիւղերի տեղափոխութիւն:

Օրինակ, եթէ մի տեղ թուրքական շրջանում կղզու նման ընկել է մի հայ գիւղ, իսկ մի ուրիշ տեղ հայկական շրջանում գտնված է մի թուրք գիւղ, հնարաւոր է նրանց էլ փոխանակել մէկը միւսով: Թէև պէտք է խոստովանենք, որ այդպիսի փոխանակութիւնները երբեմն յարուցանում են գործնական մեծ դժուարութիւններ, որովհետև հեշտ չէ այնպէս յարմարեցնել, որ փոխանակութեան մէջ մտնող գիւղերը հաւասար լինեն իրանց բոլոր պայմաններով, գիւղերի մէջ էլ շատ հանգամանքներ կապում են մարդկանց հողի ու տնտեսութեան հետ, եթէ մասնաւոր գիւղացիները ունեն այգիներ, շինութիւններ, ջրաղացներ և ուրիշ սեփականութիւններ:

Ընդունենք, որ մի քանի տեղափոխութիւններ, ինչպէս վերև յիշածներն են, իրագործվեցին և խառնաբնակ գիւղերը վերածվեցին զուտ հայկական և զուտ թուրքական գիւղերի: Իրանք, յամենայն

դէպս, չեն լուծում հայ-թուրքական հարաբերութեան և միասնակեցութեան խնդիրը և էական հարցը:

Եթէ մի և նոյն գիւղի շրջանում հայը և թուրքը միմեանցից բաժանված կը լինեն, նրանք անբաժան չեն լինի գիւղում խմբերի շրջանում և պէտք է մշտական շփումներ մէջ լինեն հաղորդակցութեան երթևեկութեան և միմեանց հետ ունեցած գործառնութիւնների ժամանակ:

Եթէ մենք մի երկրի ժողովուրդը ենք, եթէ մենք մեր գործունէութեամբ կախված ենք միմեանցից և կապ ունենք միմեանց հետ, անկարելի է, որ մենք չը մշակենք և չը հաստատենք միասնակեցութեան նպատակաւոր պայմաններ, որպէս զի մենք միմեանց ոչ միայն չը խանգարենք, այլ և աշակցենք երկրի ընդհանուր առաջադիմութեան համար:

Մեր թուրք հարեանները, սկսելով Բագուի կոտորածները, գուցէ չէին գիտում, թէ ինչ մեծ դժուրք են պատրաստում հայ-թուրքական յարաբերութիւններին և ինչ մեծ դժբախտութիւն մեր երկրի համար, բայց գոնէ այսուհետև անկեղծ կերպով թօթափէին իրանցից անցեալի ծանր շղարշը, որպէս զի երկու հարեանների մերձեցումը կարողանար տեղի ունենալ ազնիւ և արժանաւոր կերպով:

Քանի բանը ուղանում է, քանի լարված յարաբերութիւնները աւելի երկար են շարունակվում, այդքան և դժուարանում է կատարեալ և աջող հաշտութեան գործը:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԸՆԹԵՐՑՈՂԻ ՕՐԱԳԻՐԸ

XXXI

Այս էջերից շատ անգամ է յայտարարվել, թէ ներկայումս, զարմացած և զարհուրած աշխարհի աչքերի առջև, արևելոտ տօն է կատարում մի դժոխային խնդիր, որ լարված է հայութեան դէմ:

Դէպքերը գնալով պերճախօս ապացոյցներ են բերում այս ի ողորթինը հաստատելու համար: Մասնով թէ Ռուսաստանում և թէ արտասահմանում արդէն միանգամայն հաստատուել է, որ այժմեան թաթարական արշաւանքը Գօլդեյնիերի, Պէլլենիերի կարճամիտ բռնաւորական քաղաքականութեան պտուղն է:

Մի քանի օր առաջ Բագուի հայ պատգամաւորութիւնը մի և նոյն բացատրութիւնը լսեց և Կովկասի Փոխարքայի բերանից: Այսքան բարձր հեղինակաւոր աղբիւրը այլ ևս կասկածի նշոյլ անգ. մ չէ կարող թողնել մեր մէջ:

Հայալիւն մի քաղաքականութիւն: Ի պատիւ մարդկութեան, նա այսօր բաւականաչափ դատաւարութեամբ է, արդէն պատմութեան սեփականութիւն է դառնում իբրև անարգ սիրտը, որ արագիւտի մի քաղաքականութիւն էլ բողբոլի մանաւոր կերպով ծաղկում է, երկար տարիներից ի վեր, ելզըզի բռնաւորի երկրում: Այդ բռնաւորը աջողութեամբ լուծել է դժուար հարցը՝ Վարչական անասութեան թիւը, մտածել է նա, կարող է առանց աջ ու ձախ նայելու արեան գետեր ծրագրել, բայց որովհետև, ինչ էլ ասէք, կայ աշխարհ, կայ մարդկութիւն, ուստի պէտք է խաբել այդ միամիտ բաները, ոսկէզօծելով արեան

ծրագրերը նուրբ հիւսված ինտրիգներով, փառք Աստուծու, կան պաշտօնեաներ ստույթիւններ թխելու համար, կան և ոսկու քաշով վաճառվող հողիներ:

Եւ մնում չէ այժմ էլ այդ դադանային իմաստութիւնը: Ինտրիգը գործում է, ինտրիգը ցանցեր է գցում որքան կարելի է հեռու և հեռու:

Կովկասեան արևելոտ դէպքերի մէջ «Ռուսաց Հեռագրական Գործակալութեան» կատարած դերը արդէն շատ լաւ յայտնի է: Նկատում էք թէ ներկայ օրերում ինչպիսի եռանդով է գործում նա: Ամեն օր հեռագիրներ են թափվում Կ. Պօլսից, մէկը միւսից հըշաւոր մէկը միւսից յուզիչ: Եթէ հաւատանք գործակալութեան, Թուրքիայի եւրօպական մասը (առ այժմ միայն այդ մասը) ծածկված է անթիւ, անհամար ուռւներով և դժոխային մեքենաներով: Դաւադրութիւններ են «բացվում», որոնց մանրամասնութիւնները սիրալիւր կերպով պատմում է թուրք ոստիկանութիւնը և որոնք անարեւելում են, սարսուռ են պատճառում ամեն մէկին: Եւ իւրաքանչիւր այդպիսի պատմութեան մէջ անփոփոխ հողովում է միշտ մի և նոյնը—հայերի գործն է:

Ինչպէս չը սարսափէք, ընթերցող: Հարկաւոր ուռւներ են դարձված այս ինչ և այն ինչ տեղերը, նրանք կարող են տալիս ու վրա տալիս մի ամբողջ աշխարհ, բայց հանդարտ սպասում են թուրք ոստիկանութեան, որ գայ և հաւաքէ իրանց: Այդ դեռ ոչինչ: Ռուսները նոյն իսկ լիզու էլ ունեն և պատմում են սուլթանի անմիջ գաղտնիկ ոստիկաններին սարսափելի գաղտնիքներ. իւրաքանչիւրն աւսում է, թէ ում համար է ինքը նշանակված: Եւ ստացվում է մի զարհուրելի ցուցակ. Զմիւռնիայում ամբողջ յոյս աղգարանակութիւնը, եւրօպական գրասենեակները, հիւկաւտոսարանները, իսկ Կ. Պօլսում—հարկէ, դեսպանատնն է, բանկերը:

Մի խօսքով, դժոխային մի դաւադրութիւն ամբողջ եւրօպայի դէմ: Հայերը կամենում են ընալիւն անել եւրօպայի թուրքական Արեւելքում: Ի՞նչ սոսկալի արարածներ են այդ հայերը: Եւ ընական է, որ թուրքաց ոստիկանութիւնը, այնպիսի առատութեամբ ուռւներ հաւաքելով, հանդիսանում է ոչ այլ ինչ, եթէ ոչ... Եւրօպայի փրկիչ: Քաղաքակրթութիւնը, լուսաւորութիւնը հայկական ուռւները, ինչպէս յայտնի է, յորջորջվում է նաև «գթասիրտ հայը», իր բանտերը լցնում է հարեւրաւոր ու հաղարաւոր հայերով: Դա ոչ միայն նրա իրաւունքն է, ժառանգած Մօսգօլիայի և Թուրքաստանի խորքերից, այլ և մեծ բարեւորութիւն աշխարհի համար: Եւ բարեւորված եւրօպացիները շտապում են երախտագիտական ուղերձներ ուղարկել ելզըզի արեւելոտ պալատը...

Անա ինչից է պատմում «Ռուսաց Գործակալութիւնը» օր օրի վրա: Եւ նրա եռանդը չէ պակասում, այլ աճում է:

Փորձենք երևոյթի խորքը թափանցել: Յայտնի է, որ սուլթանը, իբրև անասնաման «գթասիրտ հայը իր հպատակներին», այնպէս է սեղմել ամենքի կողմը, որ ձայն-ծայուտ հանել ոչ որ չէ կարող Կ. Պօլսի հայ թերթիւների վրա կարելի է արտասուքներ հեղել թափել: Առաջնորդողի տեղում—սապօն պատառնելու խրատներ: Ոսել Թուրքիայում իրաւունք ունի միմիայն ոստիկանը: Եւ անա ինտրիգը գործում է ամենալայն չափերով, ոչնչից և ոչ որից չը քաշվելով: Պաշտօնական ստույթիւններին ծառայում են ևս հեռագրական թիւերը, պաշտօնական եւրօպայի լուռ է սփիւրսի նման: Եւ դարձեալ հարկերից ու հաղաբերորդ անգամ ճշգրտում են ուսու բաւաստելով խօսքերը:

Նորից թարմ արևն է ծխում Արեւելքում, Նորից կոտորած, ողբ ու ոռնոց, և նորից Արդար է ինձոյները սարքած դահիճը, իսկ գոհերը մատնված են չարախօսութեան:

Բայց եթէ թուրքիայում մահվան անապատ է, կայ մի հայութիւն, որ այդ անապատից դուրս է ապրում, ազատ երկիրներէ մէջ: Տաւաթախաբար, այդ հայութիւնը չափազանց անգործունէայ է, եռանդից դուրի և չէ կարողանում իր արեւելոտ հայրենիքի իրողութիւնը տալ աշխարհին: Չը նայած այս հանգամանքին, մի քանի բան դարձեալ անվում է անհամարձակ, վարկավախով: Եղիպտոսի հայ մամուլը բաց է անում սոսկալի ինտրիգի մի ծայրը:

Ինչպէս և պէտք էր սպասել, ինչպէս և ուրիշ կերպ չէր կարող լինել հայկական ուռւներին, անապին դաւադրութիւնները պատմութիւնը թուրքաց ոստիկանութեան հեղինակութիւնն է, հըշաւոր գոյներ ստացած, չափազանցած:

Զմիւռնիայի ուռւների պատմութիւնը Սալիկ-բէյ անունով մէկն է հնարել: Զմիւռնիայի կուսակալ Քեամիլ-փաշայի որդին է: «Շիրակ» ամսագիրն ասում է. «Մեզի հասած լուրերը կը հաւատեն, առանց տարալոյսի, թէ բոլորովին սուտ են այն ամբաստանութիւնները, որոնք կը ծանրանան հայոց վրա: Դաւադրութիւն մը պատրաստված է Սալիկ պէյին ձեռքովը»:

Ոստիկանութիւնը իբր թէ գտել է կնիքներ, որոնց վրա գրված է՝ «Մահ յոյներին»: Սալիկ-բէյը իր պատրաստած այդ «ապացոյցներով» ուղեցել է հայերի շարք պատրաստել յոյների ձեռքով, որոնք Զմիւռնիայի աղգարանակութեան անապին մեծամասնութիւնն են կազմում: Կովկասեան դէպքերը այսպիսի դաս են տուել այդ բէյին: Միաժամանակ թուրքաց կառավարութիւնը եւրօպական դիվանատիայի ակնաչները լցնում է հայկական դաւադրութիւնների զարհուրեցնող մանրամասնութիւններով, դաւադրութիւններ, որոնք իբր թէ ուղղված են եւրօպացիներին դէմ...

Հասկանալի է այժմ թէ ինչիւր են պատրաստվում թուրքիայի մէջ...

«Ռուսաց գործակալութիւնը», բացի թուրքական ոստիկանութեան հաւատարմութեամբ մանր հանդիսանալուց, երբեմն չէ զրկում իրան և ցինիկական սրտաբացութիւնից: Երկու օր առաջ կարդացինք մայրաքաղաքի լրագրիչներում նրա մի հեռագիրը, որ ասում էր մօտաւորապէս հետեւեալը. «Թէև թուրք ազգաբնակչութիւնը սաստիկ գրգռված է հայերի դէմ, բայց արդէն յայտնի է, որ մինչև Կ. Պօլսից հրաման չը լինի, թուրքերը ոչինչ չեն անի, ուստի կոտորածներ երկեղ չը կայ այժմ»:

Եկէք, ուրեմն, Գամար Բաթիպայի հետ կրկնենք՝

«Գոհութիւն և փառք, մեծը Փաղիշան»...

Այսպիսի գործունէութեամբ «Ռուսաց Գործակալութիւնը» ում հացին է եղ քսում: Յիշեցէք նրա հաղորդած այն լուրը, թէ հայրը թուրքիայում մզկիթն են այցել ու պղծել, յիշեցէք թէ ինչպէս այդ լուրը սուտ դուրս եկած մեր երկրում մասնազանգեաներին բռնապետ գրգռուց յետոյ...

Բայց «Գործակալութիւնը» ուրիշ առաքիւնութիւններ էլ է ցոյց տուել այս տարին: Նախիջևանի կոտորածի ժամանակ էր, կարծեմ, որ նա լուր բերեց թէ Ասիական Թուրքիայում քրդերը կոտորում են հայերին, մի լուր, որ չը ճշտվեց. օգոստոսին Գործակալութեան ստերը քաղաքապետկեցին: Նրանք հաղորդում էին թէ թուրքերը զրգուռում հայերի դէմ ծայրայեղ աստիճանին է հասել Շատ լաւ յիշում եմ, որ այդ հեռագիրներից մէկը բացարձակ սուտ էր, թէ թուրքերը Կ. Պօլսում սկսեցին կոտորել հայերին: Եւ մի քանի օր անցած—միայն մի քանի օր—Շուշու դէպքերը, և Բագուից ուղարկված տխրահռչակ հեռագիրը գտնւում էր Գործակալութեան՝ գրասենեակում ողջագրվելու «պօլսական» հարազատ, կաթնիղձայր ստույթիւններին հետ:

Միւսում թէ զուգահեռութիւններ: Պատասխանեցէ ինքները: Սալիկ-բէյի ծրագրերը և

Կողմնակառույց մինչև երկինք բարձրացրած աղա-
ղակները հայերի դաւադրութիւններէ, ուս-
ման եւ քաղաքացիական կեանքի հետեւեալ-
եան գործակալները...

Ինտերիւսները գործում է: Բայց նրա կերպա-
րանքն էլ պարզուրում է հետզհետէ:

Լ.

ՄՏԲԵՐ ԵՒ ՓԱՍՏԵՐ

II

Մեր առաջին յօդուածով, մենք թւեցինք
մի քանի կարևոր հարցեր, որ Ռուսաստանի
ազատարար շարժումը և մեր երկրում տեղի
ունեցած արեւմտահայ դէպքերը արժանի են
և այժմ պահանջում են հրամայողաբար իրանց
լուծումը: Այդ հարցերը կենսական նշանակու-
թիւն ունենալով հայ ազգի համար, պէտք է
զբաւեն նրա մասնով խաւերի բովանդակ
ուշադրութիւնը: Մենք այդ նպատակով, թը-
նուցիկ կերպով, հասկացրել էինք մի համադ-
րային ժողովի գումարման անհրաժեշտու-
թիւնը:

Այսօր մենք վերադառնում ենք այդ հար-
ցին, նրան աւելի մանրամասն ճշնելու և լու-
սաբանելու համար, մանաւանդ որ այդ հարցը
արժանի է «Հ. Օճոք» լրագրի երէկվայ հա-
մարում նաև բժիշկ Ա. Սատիսեանի:

Հայ հասարակութիւնը և հայ մամուլը պէտք
է այժմ ընթերցել զբաղվեն այդ հարցով, քանի
որ Եւրոպայի Փոխարքայի օրով կողմնակա-
նութիւն և դրա հետ հայ մամուլին որոշ ազա-
տութիւն է տրված զբաղվելու հասարակական
և ազգային հարցերով: Եւ օգտւելով այդ ա-
զատութիւնից, մենք, ձայնակցելով պ. Սատի-
սեանին, դնում ենք ուղղորդի այն հարցը,
որ շուրջին էինք մեր նախորդ յօդուածով
այն է մեր ազգային ֆալաֆակաճութեան ա-
պագայ ուղղութիւնը որոշելու հարցը:

Իսկ այդ հարցաւոր է միայն համագային
ժողովի միջոցով:

Բացառելով մեր միտքը, տեսնենք ինչ ենք
հասկանում ազգային ֆալաֆակաճութեան առ-
նակ: Տեսնենք, ունեցնել ենք մենք մինչև այժմ
այդպիսի մի քաղաքականութիւն, ինչի մէջ է
կայացել նա և կան դրդիչ պատճառներ փո-
խելու այդ քաղաքականութեան ուղղութիւնը
թէ, դուք, պէտք է շարունակենք նախկին քա-
ղաքականութիւնը անշեղ կերպով:

Մենք՝ հայերն ապրում ենք զինաւորապէս
երեք պետութիւններէ—Ռուսաստանի, Թուր-
քիայի և Պարսկաստանի հողի վրա: Կան հայ-
կական գաղութներ և Եգիպտոսում, Եւրօպա-
յի դանիական երկրներում և Ամերիկայում:
Սակայն մեզ համար իբրեւ մայրենի հող, երկր-
ներ, ճանաչված են այդ երեք երկրները, ու-
րոնց հետ մենք շաղկապված ենք պատմական
դարևոր և հզօր կապերով, որովհետև նախկին
Հայաստանի, մեր պատմական հայրենիքի
քաղաքական կեանքը հոսել է այդ երեք եր-
կրներում, այն է Թուրքիայում, Պարսկաս-
տանի Սալայական նահանգում և Անգլիոյ-
կասում: Թէև երեք երկրները՝ Ռուսաստանը,
Պարսկաստանը և Թուրքիան կառավարվում են
բոլորովին առանձին օրէնքներով և այդ պատ-
ճառով այդ երկրներին հայ ազգաբնակչութիւ-
նը տարբեր կարգի ենք և պահանջներ ունի,
բայց համադրային կեանքը մինչև մի որոշ
աստիճան միակերպ է ընթանում այդ երեք
երկրներում:

Այդ պատճառով մենք միանգամայն համա-
միտ ենք պ. Սատիսեանին հետ, երբ նա ասում
է. «Թուրքահայր, պարսկահայր և ռուսահայր
ամենից առաջ ժողովրդի զաւակն է, որ մաս-
նաւոր է իր երկրի բարեքից համար և ամա-
լովում է նրա ցանկերով: Այս կամ այն պետու-
թեան հպատակ հայերի շահերը այնքան սերտ
կերպով հիւսված են իրար հետ, որ, համար-
ձակ կարելի է ասել, Թուրքաց հայերի կեան-
քի մի որ և է իրողութիւն անպատճառ այս
կամ այն ձևով և աստիճանով անդրադառնում
է ռուսահայերի և պարսկահայերի կեանքի
վրա»:

Եւ, ճշմարիտ, Թուրքիայի հայ ժողովրդի
կրած տառապանքները ահագին աղիւցեցութիւն
գործնական և խոր կնիք դրողներն Ռուսաստա-
նի հայերի կեանքի վրա. նրանք ամբողջովին
տակն ու վրա արին, ցնցեցին նրա ամբողջ
ազգային կազմը, նոր ուղղութիւն և հոսանք
տուեցին նրա գաղափարներին, մտքերին, ձգ-
տումներին: Ռուսաստանում միայն կուլտու-
րայի, ինքնուր բարձրագոյն, տնտեսական
զարգացման անձնատուր եղած հայը ստիպվեց
և քաղաքական գործունէութիւն ցոյց աւա-
րելով, ցնցվեց և իր տանը վրայ երայրներին
որ և է կերպով օգնելու, նրա անտանելի ցա-

ւերին վերջ դնելու համար անձնատուր եղաւ
և յեղափոխական գործունէութեան, դուրս
հանց իր միջոց ընդորդող, գործող տարբեր:
Այդ ժամանակ և այդ նպատակով կազմվեցին
հայ յեղափոխական կոմիտէները, որոնց
երան էր, կարող եմ համարձակ ասել, ստեղ-
ծել Թուրքիայի հայերի համար կեանքի այն-
պիսի պայմաններ, որ ունէին Ռուսաստանի
հայերը:

Սակայն եկաւ մի ժամանակ, որ Ռուսաս-
տանի հայերի կեանքի պայմանները մէջ ևս
արժատական յեղաշրջում եղաւ շնորհիւ Լո-
ւանովի, Պլէվի և իշխան Գոլիցինի հայերի
վերաբերմամբ գործադրած նոր ազդեցիկ և
բունի ռուսացման քաղաքականութեան: Հայերը
հրատարակվեցին սեպարատիստներ, Ռուսաս-
տանի թշնամիներ. հայերը սկսեցին կասկա-
ծելի երևալ նոյն իսկ ռուսաց ինտելիգենցիա հա-
սարակութեան աչքում, որովհետև չէր լինելով
մամուլի ազատութիւն, այդ ազատութիւնը
արված լինելով միայն մամուլի հայտատեաց և
հայերին թշնամի օրգաններին, ռուս հասարա-
կութեան մէջ սկսվել էին ընդհանրապէս այն ա-
ռասպելները, թէ հայերը ցանկանում են ունենալ
իրանց սեփական թագաւորութիւնը, թէ նրանք
մեծ համակրութիւն են տածում դէպի Անգ-
լիան և հակակրութիւն դէպի Ռուսաստանը
այն:

Այս բոլոր զրգարութիւնները, որոնք ծա-
րացում էին հայերի վիճակը Ռուսաստա-
նում, բաւական չէր համարվելով, ձեռք դար-
վեց ուրիշ նոր հարստահարութիւններ. փակ-
վեցին հայոց դպրոցները, նրանց բարեգոր-
ծական-քաղաքակրթական հաստատութիւննե-
րը: Դժգոհութիւնը իր գագաթնակէտին հա-
սաւ, երբ Գոլիցինեան ընթերցեց ձեռք գրեց
և հայոց տեղեկացու վրա, երբ այլ և ոչ մի կաս-
կածի տեղիք չէր մնաց, որ այդ բոլոր հարս-
տահարութիւնները վերջնական նպատակն հայ
ազգի բարոյական և հոգևոր ինքնուրոյնու-
թիւնը, անկախութիւնը, ազգայնութիւնը
չնշելն է: Յեղափոխական կազմակերպութիւն-
ները իրանց պարտքը համարեցին տարածել
իրանց գործունէութիւնը և Ռուս-Հայաս-
տանում ու ժողովրդի բողոքներին ոյժ տալ:

Ապա պայթեց Թուրքիայի արշաւանքը հայե-
րի դէմ: Հայ ժողովուրդը, որ ամենին չէր
սպասում այդ արշաւանքին, յանկարծակի
եկաւ. նա զուրկ էր ինքնապաշտպանութեան
միջոցներին: Նրա յոյսերը, թէ տեղական
վարչութիւնը կը պաշտպանէ իրան, զուր ան-
ցան. ընդհանապէս, շատ տեղերում, ինչպէս
Բագու, Նախիջևան, տեղական վարչութիւնը
նոյնպէս զինաւորվեց հայերի դէմ: Հայ ժողո-
վուրդը տեսաւ, որ իր դէմ դուրս է եկել մի
նոր, աւելի ահաւոր և աւելի վտանգաւոր
թշնամի—Թուրք տարրը, վտանգաւոր ոչ թէ
միայն իր քանակութեամբ, իր ֆիզիքական
ոյժով, այլ իր անկուտուրեղանութեամբ, իր
պատերազմաւէր բնութեամբ և իր ձգտում-
ներով: Երբեք հակառակորդի հետ ոչ թէ կուլ-
տուրայով, ուսումով, այլ բուն ոյժով, զինքի
օգնութեամբ: Ծագեցին լուրջ կասկածներ և
ենթադրութիւններ, որ Թուրքերի ձեռքը դի-
նաւորողը Թուրքական այն քաղաքական շըր-
ջաններն են, որոնք կուլ են յայտարարել
Թուրքիայում հայերի դէմ: Ծագեցին և ուրիշ
ենթադրութիւններ, որոնց լուսաբանութիւնը
շատ կարևոր է:

Վերջապէս, իբրեւ միութարութիւն և մի
ամբողջ հայ ժողովրդի կրած տանջանքնե-
րի, հրատարակվեց Կովկասի նոր Փոխարքա-
յի և ռուսաց կառավարութեան նոր քաղաքա-
կանութիւնը հայերի վերաբերմամբ, հիմնված
հայերի ազգայնական իրաւունքները և ձգ-
տումները յարգելու վրա: Երբեք զինքի ամբողջ
հայ ազգը իր հրճուանքը յայտնեց ռուսաց
կառավարութեան այդ նոր քաղաքականու-
թեան վերաբերմամբ, որի հետևանքն եղաւ
կալուածների վերադարձումը և ազգային զբա-
ղումների բարեարարումը:

Եւ այն բոլոր այդ հանգամանքները ան-
հրաժեշտ են դարձրել մի կապիտալ հարցի
ընթերցումը՝ ինչ ուղղութիւն պիտի ունենալ
այսուհետեւ մեր ազգային ֆալաֆակաճութիւնը:
Երկու կարևոր հարցեր ծագել են հայ ժողո-
վրդի համազգային կեանքի մէջ և կենտրոնա-
կան տեղ գրաւել, ինչպէս շնչում է պ. Սա-
տիսեանը. ռուսա և բուրժուալի փախադարձ
յարաբերութիւնը եւ ռուսաց հողի սանձման-
բաւ պարզ հայերի յարաբերութիւնը դիպի
Ռուսաստանի եւ հաւեան ազգութիւնները:

Այն այս հարցերի և դրանց իբրեւ հետևանք
ազգային քաղաքականութեան ուղղութեան ու-
րոշման համար անհրաժեշտ է գումարել հա-
մագային ժողով, Ռուսաստանի, Պարսկաս-

տանի, Թուրքիայի և այլ երկրներում ապրող
հայերի օրինաւոր ներկայացուցիչներին:
Եւ մենք համակրութեամբ ողջունում ենք
այն նախաձեռնութիւնը, որ մի խումբ անձինք
ստանձնել են այդ համազգային ժողովը գումա-
րելու համար:

Շահրիար

ԲՈՒՐՈՒՄՆԻ ՇԱՀԵՐԸ ԵՒ ԱՂՄԻՆԻՍՏՐԱ-
ՑԻԱՆ

Բագուից ակնաշիւ հասաւ մի շատ բնորոշ
փաստ: Այս անգամ նախքան և նրա նախորդ-
ված հերոսները չեն գործողները:

Միայն տեսնելով և ասպարէզում, իր բոլոր լաւ և
վատ յատկութիւններով:

Բուրժուան, զբաղմանքն ամեն տեղ մի և
նոյն որոշ գոյն ունի: Այդ գոյնի անունը շահ է,
դրամապիւի տոկոս:

Այն փաստը, սակ, անպաճառ փաստը:

Բագուի հոգեւորական ծխախոտագործարա-
նում, որի տէրն է պ. Միրզաբեգեանը, աշ-
խատում էին 400 հայ բանւորներ, 150 հոգի
կանայք, 50-ի չափ տղամարդիկ և 45 հոգի
Թուրքեր:

Կատարվում են օգոստոսի արեւնահողութիւն-
ները: Ուղիւ տէրը, պ. Միրզաբեգեանը Թուր-
քում է փուշ ու ատառակի վայրը, արեւն
դաշտը և գնում եկատերինդար, գուցէ և ու-
րիշ գրաւմանավայրեր:

Ինչիւ մնայ, ինչ գործ ունի: Աւելի լաւ չէ
ուրիշ ձեռքով վարել քաղիւղ, որ փուշը Նրա
մասնները ծակէ, իսկ վարդի բուրժուանը միայն
ինքը շնչէ: Զի որ դա է կապիտալիստի մըշ-
տական արհեստը, նրա «օրհնալ սուլաբուրխը»:

Թիւրքագետների գործարանի բանւորները
մնում են կրակի մէջ. այրվելու, գնդակահար
լինելու երկիւղը միշտ զլիններին կախած:
Իսկ տէրն ազատ, հեռու վայրերում, հանգիստ
ու ապահով:

Այրվում է ամբողջ նախադաշտը: Այրվում
են շատ տներ ու շէնքեր քաղաքում: Իսկ
գործարանի աշխատում է չնչին ընդհարում-
ներով: Բացառելով են միայն Թուրք բան-
ւորները, որոնք գուցէ աւելի «ասուածամա-
նոյ» գործի էին գնացել:

Անցնում են Թուրքական գաղաւթութիւն-
ների կրիդիսի սուր բալէները, Թուրք բան-
ւորները դալիս են, որ նորից աշխատեն:

45 հոգի են դարան, բոլորն էլ զինված:
Դրանցից իւրաքանչիւր մէկը որոշ անցեալ ու-
նի: Երկու տարի առաջ դրանք սպանել են
նոյն գործարանի մի հայ կառավարչին, միւս
բոլոր պաշտօնեաներին պահել են յաւիտե-
ական սպառաքի ու սպառնալիքի աղիւցե-
թեան տակ: Դրանցից 5 հոգին անցեալ տարի
օգոստոսի սպանեցին իրանց ընկեր հայ բան-
ւորին և բանտից դուրս եկան միայն այնքա-
նի շնորհով, որ մահվան սպառնալիքով ստի-
պեցին հայ վկաներին փոխել իրանց ցուցում-
ները:

45 հոգի զինված Թուրքներ ներս ընդունել
5—600 անդէն մարդկանց մէջ... Ի հարկէ
հայերը և ռուսները միաբերան (բացի 15
ռուս տղամարդ բանւորներից) բողոքում են
Թուրքների վերնադնելու դէմ: Հայերը յայտ-
նում են, որ իրանց և Թուրքների մէջ դեռ
հաշտութիւն չէ կայացել և որ նրանք դեռ ևս
անկարող են աշխատել զինված Թուրքների
հետ միասին:

Գործարանի կառավարիչը չէ ընդունում
Թուրքներին:

Թուրքները ճանապարհները լաւ են սովորել.
նրանք իսկոյն դիմում են գնեւերալ-նահանգա-
պետ Յապզէիին, բողոքում, արեւն-արցունք
Թափում, որ իրանց զրկում են, աշխատանքի
չեն ընդունում...

Դեռեւրալ-նահանգապետն այլևս չէ մտնում
հարցի ընթերցում մէջ, չէ ուղղում պարզի
գործի էութիւնը և իսկոյն հեռազրում է Եկա-
տերինօղար պ. Միրզաբեգեանին:

Աղան դալիս է:

Նա ոսկու ներկայացուցիչն է. նրան հար-
կաւոր է պրօցէնտ, շահ, իկամուտ: Նա էլ չէ
մտնում հարցի ոչ մի մանրամասնութեան մէջ
և անմիջապէս մեղադրում հանում բանւորներին
ու կառավարչին: «Իմ գործարանի դուրսը
բաց են բոլոր բանւորները առաջ», յայտնում
է շտապով ոսկու տէրը:

Դեռեւրալ-նահանգապետը հրամայում է կա-
ռավարչին ընդունել Պ. Կառավարչին իսկոյն
շտապում է գնեւերալ-նահանգապետի մօտ, բա-
ցատրում նրան գործի էութիւնը, բայց գնե-
ւալ նահանգապետը չէ լսում նրան և հրամա-
յում է, որ մինչև սեպտեմբերի 26-ն անպատ-
ճառ վերնադնեն Թուրքներին գործարան:

26-ի առաւօտեան Բագուի ոստիկանապետի
պաշտօնավար պորուչիկ Իզրաշը, կապակներն
առաջ գցած, Թուրք բանւորներն էլ ետեւից,
հանդիսաւոր գնացելով գալիս կանգնում է
գործարանի դռանը. ներս է անում Թուրքե-
րին և հրամայում բանել՝ հակառակ գործա-
րանի վարչութեան, հակառակ բոլոր հայ և
ռուս բանւորների ցանկութեան:

Մօտ 600 բանւոր Թուրքներ են գործարանը
և հեռանում 45 Թուրք բանւորի պատճառով:
Գործարանի վարչութիւնն էլ ամեն ինչ Թուր-
քում հեռանում է, երբ տեսնում է այդպիսի
ապօրինի, բանակալական քայլ իշխանաւորի
կողմից:

Ինչպէս ոստիկանապետը մարդկային բոլոր
իրաւունքները. չը տալ 5—600 հոգու նոյն
իսկ վախենալու իրաւունք. լինէ և սա. մեր
ենք մենք ապրում:

Գործարանի կառավարիչ պ. Ալաւեան
անմիջապէս դիմում է գնեւերալ-նահանգապե-
տին, բայց նա հրամայում է Ալաւեանին
բանտ նետել, որովհետև չէ կատարել իր
հրամանը:

Այժմ կառավարիչը բանտումն է, գործարա-
նում իբր թէ աշխատում են 45 հոգի Թուր-
քեր և մի քանի հոգի ռուսները: Ոստիկա-
նութիւնը ոչ մի ջանք չէ խնայում ռուս կին-
բանւորներին համոզելու, որ վերադառնան
գործարան, Թուրքներն հետ միասին աշխատեն:

Բանւորի իրաւունքը սքաւալու իրաւունք է:
Բայց դրանից աւելի բարձր է մարդկային
անձի ապահովութեան խնդիրը:

Երբ գործարանատէրը տեսնում է, որ իր
կարողութիւնը մօտենում է անդունդի ծայրին,
նոր միայն խելի է գալիս և ներկայացնում
մի մանրամասն գեղուցադիր գնեւերալ-նահան-
գապետին, պարզում ամեն ինչ և խնդրում,
որ իր գործարանն ազատեն այդ 45 խաներից
ու բանակալ-բանւորներից, սրովհետև դրանք
ֆաստում են ոչ միայն իր շահերին, այլ և
կարող են սպառնալ նաև քաղաքի հանգստու-
թեանը:

Ասում են, որ ուղղում են այդ 45-ի համար էլ
բաւական զգալի վարձատրութիւններ առնել
պ. Միրզաբեգեանից և ապա նրանց հաճելի
ներկայութիւնից զրկել նրան:

Այն թէ մինչև որ աստիճան կարող է ար-
դարութեան գաղափարն այլադաշնակել, խեղա-
թիւրման մասնակի:

Ստաֆիկ

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌՈՒՑ

Հանգեցուրի հանքեր, սեպտեմբերի 20-ին:
Սեպտեմբերի 7-ին Գորիսից Տաթևի վրա-
յով եկաւ հանքերը պրինց Լ. Նապօլէօնը:
Պրինցի ընդունելութիւնը շատ շքեղ էր: Ըն-
դունելութեան համար պատրաստված էր պ.
Ա. Մէլիք-Աղաբեանի կառավարչի բնակա-
րանը: Բակի մուտքի վրա շինված էր յաղ-
թական կամար Թաւր ծաղիկներից հիւսված,
ապա կամարի մէջտեղը, խորը տառերով
զրված՝ «բարի գալուստ» ռուսերէն բառերը
եղէն քանդակաւորութեամբ լուսաւորված:

Հայերը մեծ բազմութեամբ հաւաքված՝
գլուխ ունենալով տէր-Գրիգոր առաջ քահա-
նային իր երեք ընկեր քահանաներով—աղ ու
հայ մատուցին: Հէնք որ պրինցը մօտեցաւ,
ձիուց իջաւ, խաչը համբուրեց և աղ ու հաց
ընդունեց: Մուտքայն ասել, որ ճանապարհին
Առաջնորդում նոյնպէս հայերը աղ ու հաց են
մատուցել, իրանց գլուխ ունենալով պ. Ս. Մ.
Ս.-ին, որը ժողովրդի կողմից մի քանի խօսքե-
րով պրինցի գալուստն է շնորհաւորել: Տեղիս
հայերը մի պետիցիա ներկայացրին, նկարա-
գրելով ներկայ անհանգիստ դրութիւնը...
Հանձնաւորները ևս մի պետիցիա ներկայացրին
իրանց կողմից, գնաւապետիւնով, որ հաղորդակ-
ցութիւն չը կայ, որի պատճառով միջբը չէ
ստացվում և այլն...

Պրինցը ժամանց հանքերը ժամի 12-ի մօ-
տերը. մի փոքր հանգստանալուց յետոյ ճա-
շեց և ժամի 4-ին ճանապարհով դէպի
Պարսկաստանի սահման դիմելու ու այնտեղից
Օրդուբաթի վրայով գնաց Նախիջևան: Պրին-
ցը հայերից գոհ սրտով հրաժեշտ տուեց:

Անցեալ նամակումս գրել էի, որ բազմի
բոլոր խանութները դատարկել են, ասինքը
իրանց գիւղն են տեղափոխվել, որ գալիք
Թաւրին զոհ չը գնան. սեպտեմբերի 10-ից
նորից սկսել են կամաց-կամաց ապրանքները
գրեղից տեղափոխել խանութները:

Շուտով կը լրանայ երկու ամիս, որ հա-
ղորդակցութիւնը բոլորովին կարված է ար-
տաքին աշխարհի հետ: Ապրանքները շուտով
սպառվելու վրա են. հէնք այս բալէին շատ

խանութներում դատարկ նստած, օրերը համարելով սպասում են, թէ երբ պէտք է ճանապարհները բացվեն, որ ապրանք ստանան: Շնորհիւ վերոյիշեալ պայմաններէ, միջբերքը մի չը տեսնված թանգութեան են հասել, որի պատճառով աւելի ու աւելի են գնալով բարձրանում. խեղճ, աղքատ գիւղացիներ ու հանքերի բանուորները ինչպէս ապրեն մի այդպիսի պայմաններում: Վսիկց թէ հայ, թէ թուրք չեն համարձակվում գնալ անտառ ածուխ և փայտ բերելու գործարաններ համար: Տեղիս գրութիւնը աննախանձելի է:

Պանդուխտ

ԱՆՏԵԱՆԻՑ ՄԻ ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆ

Ներկայիս արիւնոտ անցքերը յիշողութեանս մէջ գարթեցնում են մի դէպք, որին ես իբժամանակին մի առանձին նշանակութիւն տալ չէի կարող:

189... թականն էր. Գանձակից վերադառնում էի թիֆլիս: Կայարանում սովորականից աւելի ժողովուրդ էր. աչքի էր ընկնում պատուաւոր թուրքերի մեծ բազմութիւն. նրանց մէջ, կարծիքս ֆէսը գլխին մի պարոն, ըստ երևոյթին բոլորի ահաճութեան առարկան էր: Երբորդ գնալով տուն, ֆէսաւոր մարդուն յարգանք մատուցանող անձինքներից շատերը մնաւ բարով արին նրան ու բաժանվեցին: Մնացածները նրա հետ մտան վազօն: Գառախումը շարժվեց: Ֆէսաւոր մարդը տեղաւորվեց օթեակներից միում. մնացած ուղեկցողները շրջապատեցին նրան: Ես նստած էի հարեան օթեակում մի քանի ուս պարոնների հետ և անտարբեր դիտում էի, թէ ինչ է կատարվում շուրջս... Անկարելի էր չը նշել, որ հարեան օթեակի ուղեւորները մեծ ուշադրութեամբ լսում էին ֆէսաւոր պարոնին. ըստ երևոյթին վերջինս պատուում էր նրանց հետաքրքիր նորութիւններ Կ. Պօլսից, որովհետև Ստամբուլի ու փաղիշակի անունները շուտ-շուտ լսվում էին...

Այդ միջոցին իմ ուղեկցներս, որոնք դատարանի ծառայողներ էին, մի շատ հետաքրքիր խօսակցութիւն սկսեցին, որին ես էլ ասիւղված էի մասնակցելով. բայց հարեան օթեակի անտարբերութիւնը ձայնը միշտ ականջումս էր:

Հասանք Ջազեան: Իմ խօսակցները ցած իջան: Ծած իջան և ֆէսաւորին ուղեկցող պատուաւորները: Վազօնում մնացին ես ու անձնակազմը պարոնը: Յերեկ էր: Կառախումըը սկսեց մոնիթորով առաջ գնալ: Բնադրմամբ էր թէ ինչպէս, երկու ճանապարհորդներս մի քանի բազէից յետոյ նստած էինք դէմ առ դէմ... Վազօնում, ինչպէս ասացի, որի մարդ չէր մնացել: Կարճ լուսնից յետոյ՝ հարեանս գիւղացի ինձ ֆրանսերէն լեզուով.— «խօսում էք դուք ֆրանսերէն, պարոն»:

—Ո՛չ չեմ խօսում, պատասխանեցի ես:
—Ապա ինչ լեզուով էք խօսում, հարց տուեց պարոնը:

Ես ասացի, որ խօսում եմ հայերէն, ուսուսանում...

—Ուրեմն դուք հայ էք, ասեց հարեանս հայերէն լեզուով. իսկ ես ձեռքս դրաւ իմ վրայ:

—Ի դուր, նկատեցի ես. միթէ իմ խօսող յօնքերս, դէմքիս խոշոր գծերը չեն վկայում, որ հայ եմ:

—Իրաւունք ունիք, պատասխանեց խօսակցս. բայց Կովկասի մէջ բազմաթիւ տեղաբնակներ կը հանդիպեն, ուստի սխալի կարելի է. անաւանիկ ես ալ ծագումով հայ եմ, բայց միթէ հայու նման եմ:

Արեւոյի խօսակցս բոլորովին հայի նման չէր. արտաքինս նրան չէր կարելի գնահատանի իսկական տաճկից:

Ինչ և ից վազօնում, երկու օտար մարդ, ընդհանրաբար պիտի ծանօթանային: Եւ ծանօթացանք: Մեծ եղաւ դարձմամբ, երբ ուղեկցողները միմեկին հարցաւորեցին, որ ուր ծանօթ է: Մեր խօսակցութիւնը, այսպիսով քանի գնաց, աւելի մտերմական կերպարանք ստացաւ: Խօսակցիս անունը չեմ կարող յիշել. բայց խօսակցութեան էութիւնը անհնարին է մոռանալ...

—Պարոնը գալիս է Կ. Պօլսից. նա ուղարկված է Կազակ Ստամբուլում հրատարակվող մի թուրքասէր թերթի կողմից... Նրան առած հրատարակները փախուկ են և բազմակողմանի: Նա պէտք է գիտէ և իմանայ՝ Կովկասում ապրող ազգութիւնների փոխադարձ յարաբերութիւնները, այդ ազգութիւնների հայրացները գիտէ տեղի պետութեան քաղաքականութիւնը. Կովկասում ապրող երկու մասնաբաժան

մեծ ճիւղերի փոխադարձ համակրութիւնն ու հակակրութիւնը:

—Պարոնը ճանապարհորդում է որպէս ուղեւոր մասնաբաժան, որ ամենին չի հակառակում նրա գաղափարներին, որովհետեւ ինքը համոզմունքով կ'օսուի իր իշխանութիւնը: Նրան չի խանգարում սկիւն սկիւն, իսկ սպիտակին սպիտակ:

—Պարոնին Բագու փառաւոր ընդունելութիւն են արել՝ հիւրասիրել են խմորով և առանձնակի. նա երկու անգամ գիշերային ունկնդրութեան է արժանացել, և ստացել է յանձնարարական նամակներ...

—Բագուի մէջ պարոնին ամենից շատ դարձաւոր է այն երևոյթը, որ այնտեղի պարսկադաւան մասնաբաժան աւագանին շահին չեն յարգում, բայց անհափ համակրում են սուլթանին, որի ձեռքին է, նրանց կարծիքով, համայն մահադականութեան բաղդը:

Ահա համառոտութիւնը այն երկարատեւ խօսակցութեան, որ տեղի ունեցաւ իմ և Պօլսից եկած թղթակցի միջև: Հարկաւ ուրիշներն էլ յիշում են մի այսպիսի թղթակցի գալուստը Բագու. բայց թէ հարկ մի ուրիշին յաջողած լինի երկարատեւ և մտերմական խօսակցութեան շնորհիւ դուրս կ'ընդունէ նրա ծրագրի միջոց այսքան անդակութիւններ:

Պէտք է աւելացնեմ, որ մեր խօսակցութիւնը երբեմն խիստ վիճաբանութեան էր փոխվում: Օրինակ՝ երբ պարոնը բացարձակ կերպով յայտնեց, որ սաստիկ հայատեաց է, ես անհափ վրդովեցի և մի շարք փաստերով աշխատեցի ապացուցանել, որ նա սխալում է. «Բոլոր հայերս յարգում ենք թուրքին ոչ պակաս քան հային».— ասացի: Բայց խօսակցս հակառակ փաստեր առաջ բերեց:

Արդեօք ներկայիս արեւմտից դէպքերը աւելի շահալից ապացուցներ չեն, նրբամիտ ճանապարհորդի գուշակութիւնները հաստատող:— «Ժամանակը կու գայ, ըսածներուս վերահասու կը լըք»:

Այս, ժամանակը եկաւ. բայց այն, ինչին որ մենք վերահասու եղանք, խեղճ ֆէսաւոր, վառ երեւակայութեան անգամ չէր կարող պատկերացնել:

Ս. Կ. Գ.

ՄԵՐ ՇՈՒԿԱՅԻ ԿԱՐԳԵՐԸ

(Նամակ Նոր-Բայազէտից)

Այս տարի խաղողի, ձմերուկի և այլ մթերքների սաստիկ առատ ներմուծում կայ մեզանում: Օրական բնութեով ու սայլերով Երևանից, Լոյս-Բուլաղից, Շարուր-Դարալագեանից և այլ տեղերից թափվում են թէ մեր շուկայում և թէ շրջակայ գիւղերում: Բաղադրում այդ մթերքները ծախվում են կանխիկ փողով, իսկ գիւղերում փոխանակվում են մեծ մասամբ հացահատիկների հետ: Սակայն մեր քաղաքում այնպիսի առուժախի կարգեր են տրուում, որ ժողովուրդը ոչ մի բաւականութիւն չէ ստանում այդ մթերքները գնելու՝ թէ գնելի և թէ ուրիշ հանգամանքների պատճառով: Մարդ աշխույժ է, որ անկախ մրցավաճառները, զերեկ այդ մթերքները իսկական արտահանողից, տեղիւնեղը ծախում են կրկնակի գներով. նրանք ընդառաջ գնալով նոյն իսկ քաղաքի ծայրում՝ գնահատում են ապրանքը և բնութեով ուղղակի բնաց խանութը տանում, իսկ ժողովուրդը մնում է շուկայում, և ստիպված է լինում կրկնակի գին վճարել: Այդ կարգերի մէջ նկատվում նաև ուրիշ շատ մթերքների առուժախի, — օրինակ՝ ալիւրը, բրինձը, չիրը և այլն, որոնք ամենամանրաժեշտ ուտելիքներն են տեղական ժողովուրդի համար:

Մի օրինակ բաւական է ցոյց տալու համար մեր քաղաքի կարգերը:—Օրինակ, չիր ծախողների մի քաղաքն է գալիս Նախիջևանի կամ Օրդուբաթի կողմերից. բնութեով զրկվում են, դիցուք, զանաթի տակ, և անա իսկոյն վազում են քաղաքներ, մի կողմ քաղաք ծախողին և ծածուկ գները բարձրելով՝ բոլորը իշխում և իրանց խանութն են տանում, և այլն այսպէս:

Որքան յայտնի է, քաղաքներ մտնող մթերքները պէտք է մնան քաղաքային կշիռի տակ մինչև ճաշը, ժամը 12-ին, երբ տեղական անուրները իրանց հարկաւոր գնումներն անեն, և ապա ճաշից յետոյ հերթը գալիս է խանութագաններին: Այն ինչ մեզանում հակառակ է տրուում: Ինչ ժամանակ ուղում են՝ գնում են, ինչ գին գնում են՝ նոյնպէս, ով է նայողը, ով է հսկողը առուժախի կարգը:

Ինչ նրանից է, որ մեզանում շուկայի վերահսկիչ-քաղաքային չը կայ. այդ հսկողութիւնը կարծեմ թողնված է գործողութիւն, որոնք իբր թէ հասարակութեան շահին են պաշտպանում, բայց իսկապէս նրանք առ ու ծախսի և զանաթի տակ չեն էլ «սթրում», ուստի առուտրի վերահսկողութիւնը քաղաքային կշիռի տակ բարձր թողի է արված, որտեղ տեղի են ունենում զանազան գեղծումներ, խաբէութիւններ ու կեղծիքներ: Պէտք է յիշել նոյնպէս, որ մթերքաւոր գիւղացին կամ օտարական արտահանողը այնքան էլ հասկացողութիւն չունի քաղի ու կշիռի, հաշի ու համարի մասին... Եթէ ընդունենք էլ մի բով, որ մի գիւղացի մեքենայական կշիռ, առուժախի և հաշի մասին գիտէ, սակայն նա այնքան վստահութեամբ ունի գեղծումները բնութեով, ի հարկէ ոչ: Նա այդ դէպքում տուժելու ծնծվելու է և այլ լուստանքներ ենթարկվելու:

Բայց միթէ մեր քաղաքը անկարող է պահել յատկապէս մի քաղաքային մի փոքր ուժիկով, որը ահագին օգուտ կը լինէր ժողովուրդին՝ նրա տարեկան ահագին միջոցաւորների դէմ, որ զանազան հանգամանքներում աւելորդ գումարներ է կորցնում այլ և այլ նիւթեր գնելու: Հարկաւոր է օր առաջ մտածել մեր շուկայի կարգերը կանոնաւորելու վերաբերմամբ, մասնաւորապէս այժմ, երբ արդէն մթերքների ծախսը քաղաքային կշիռի տակ քառապատկիվում է, իբրև ձեռնարկ պաշար պատահանելու մի ժամանակամիջոց:

Կուն

ՆԱՄԱԿ ԿԱՐԳԵՐԸ

Սեպտեմբերի 25-ին

Հոսում է հայի արեւն. մի տեղ թուրքն է սպանում հային, մի ուրիշ տեղ ինքը հայն է իր եղբոր վրա ձեռք բարձրացնում, նրան սպանում:

Այսպէս, այսօր տուրքը երկու երիտասարդ գոհեր: Ընդամենը 12-ին 10 քաղաքային, յանկարծ լսվեցին ատրճառակի իրար յաջորդող մի քանի հարուածներ Պօլսից: Երբեք հայրենիքի երկու հայեր: Ամբոխը սկսեց հանգրվանել երկու հայեր: Ամբոխը զինվելով փակվեցին մագազինները, մրգավաճառների ապրանքը ոտի տակ արորվեց, առ ու սարսափի մէջ մարդիկ կարցրին գլուխները, փախչում էին առանց յետ նայելու, առանց հաշի տալու իրանց: Ծառերը կարծեցին թէ անա սկսվեց ուրիշ քաղաքների նման կոտորածը:

Բարեբաղդաբար, շուտ վրա հասան կողակները, ոտիկանութիւնը, սարսափիկները կոմանայից 10 հոգի և մի վաշտ հետեակ և շուտով հնար եղաւ պարզել եղիւթութիւնը:

Ժողովուրդի մեծամասնութեան ցուցմունքի համաձայն եղեւութիւնն այսպէս է: Չարդանդ անունով մի հայ փողոցում կանգնած խօսում էր իր ընկերներին հետ: Յանկարծ վրա հասան մի քանի հայեր, թափեցին գնդակներ ատրճառակներից, և օգտվելով շփոթութիւնից՝ անհետացան. փախան և Չարդանդը ընկերները, թողնելով փողոցում նրա մեռած մարմինը: Ոստիկանութիւնը դիակը տարաւ ուստիկանատուն: Անցաւ մի երկու ժամ, դուրս երկրից վերոյիշալ փողոցում գտնված մի քանի անունը Մուշեղ էր, Չարդանդի ընկերներից: Դէպքը տեղի է ունեցել այսպէս. երբ իրանց վրա յարձակվել են, Մուշեղը դաշոյնը հանած կամեցել է խփել հակառակորդներին. վերջը ստանալով, փախել և թաքնվել է Գեաւադանի Կակոսեանի խանութում: Խանութագանը անհերքելի, առանց ձայն հանելու, իր գլուխը կորցրեց, փակվում է իր խանութը իր դռներին: Նման և տուժ է փախչում, ճանապարհին մի քանի մարդկանց յայտնելով, որ մէկ վերաւոր էլ իմ խանութում կայ: Իսկական յանցագործները դեռ չեն գտնված, նրանց փոխարէն ձեռքաւորված են բոլորովին անմիջ մի քանի մրգավաճառներ և խանութագաններ, բայց, ի հարկէ, արդարաւորութիւնը թող չի տայ, որ անմեղ մարդիկ տուժեն:

Որքան ցաւալի է կորուստը, ևս առաւել ցաւալի է այն, որ մենք կուտում ենք միմեկանց հետ օտարների աչքի առաջ, ուրախացնում ենք մեր թշնամիներին:

Մ. Ոսկանեան

ՆԱՄԱԿ ՊԵՆՏԻՓՈՐՄԻՑ

Սեպտեմբերի 19-ին

Այս տարի մեր դպրոցի աշակերտները թիւը աւելացաւ 50—600-ով: Այս ուրախալի երեւոյթը նորից ուսուցչական խմբին պէտք է վերագրել: Այժմ ծնողները տեսնելով, որ ուսուցիչներն առ կանոններ են տրեւալուտում և որ երեխաների մտաւորի վրա աւելի ուշադրութիւն է դարձնվում քան առաջ, մեծ ուրախութեամբ են իրանց երեխաներին մատուցում մեր դպրոցը: Եթէ այսպէս գործը գնայ, կարելի է յուսալ, որ կարճ ժամանակվայ ընթացքում աշակերտների թիւը կ'աւելանալի և կարելի կը զգացվի ուսուցիչները երկդասնանի վերածել:

Բայց ինչ անես, որ մեր եկեղեցին այնպիսի պարտքերի մէջ է գտնվում, որ շուտով չէ կարող ներկայ պայմաններում դրանցից ազատվել: Գլխաւոր պատճառներից մէկն այն է, որ վերջին 10 տարվայ ընթացքում մեր երեցիկները ժառանգաբար ընտրվում են այդ եկեղեցու պարտատէրերը (բացի մէկից) և մինչև երբ այդ բարեբախտները (հասարակութեան հաշուով) ասպարէզից չը հեռանան, մենք երկդասնան ուսուցիչներ չենք ունենալ:

Այդ պարտքերից մեր եկեղեցին երկու միջոց ունի ազատվելու. 1) կամ պէտք է ուսուցիչները փակել և միանգամ բարեբախտների պարտքը վճարել և 2) կամ մի քանի տարվայ ընթացքում վճարել: Բայց որովհետեւ կատարել անհնարութիւն և միանգամայն անիրագործելի է դպրոցի փակումը, ուստի մնում է գիւծել միայն երկրորդ միջոցին: Եթէ 1905/06 թ. եկամուտի վրա աւելացնենք մօտաւորապէս 3000 ռ. կառավարութիւնից ստանալով, ընդհանուր մուտք կը լինի մօտ 8000 ռուբլի: Մինչև այժմ եկեղեցին և ուսուցիչները միասին ունեցել են տարեկան 2300—25000 ռ. ծախք, ուրեմն աւելորդ գումար մնալու է 5500 ռ.: Եթէ այդ գումարից 2500 ռ. յատկացվի երկրորդ դասերները բացմանը և գիմնազիաներում հայոց լեզուի և կրօնի դասատուին, ապա դուրսը պէտք է մնայ 3000 ռ., որը և տալ պարտատէրերին, և, այսպիսով, կարելի է 2—3 տարվայ ընթացքում, թէ պարտքերից մասամբ թեթեւանալ և թէ երկրորդ դասարանեան դպրոց ունենալ և թէ գիմնազիաներում հայոց լեզու և կրօն պարսպել:

Այս բաները կարող է իրագործել միայն պարտաճանաչ հոգաբարձութիւնը, բայց ինչպէս երևում է, դեռ էլի երկար տարիներ մեր հասարակութիւնը կը ղեկավարվի այն համոզմունքով (չը լրատվելով անցեալի դասերից), որ հոգաբարձութիւնը պէտք է անպատճառ լինեն միայն ցնդաւոր և հարուստ անձնաւորութիւններ, իսկ ոչ ունեւոր, բայց գործունեայ, եռանդոտ և ժամանակակից պատանները ըմբռնող, զգայուն մարդկանց, որոնց դերը վերադասված է հեռաւոր ապագային:

Ժողովուրդական

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԻՐ

«Մշակի» ներկայ համարը բաղկացած է 14 թերթերի:

Սեպտեմբերի 19-ին Նորին Կայսերական Մեծութեան Թագաւոր Կայսրին ներկայացել է Գանձակի նահանգապետ Կալաչեւի:

Մեզ հաղորդում են, որ ամսիս 30-ին, երեկոյան ժամը 8-ին, իբրական 4-րդ գիմնազիայի շէնութեան մէջ տեղի է ունենում Ժողովուրդական դասախօսութեան հայկական սեկցիայի խորհրդակցութիւնը ապագայ դասախօսութիւնների ծրագրի և այլ ընթացիկ հարցերի մասին. խորհրդակցութեանը կարող են մասնակցել միմիայն սեկցիայի անդամները:

Թիֆլիսի Միքայելեան հիւանդանոցի գլխաւոր բժշկը յայտնում է Կովկասեան բժշկական ընկերութեան, որ վերջին ժամանակներս հիւանդանոց բերվող սպանվածները, վերաւորների և հիւանդների թիւը չափազանց շատ է, ուստի անհրաժեշտ է, որ քաղաքը դոնէ մի ժամանակաւոր հիւանդանոց բաց անէ կամ վարակչի հիւանդութիւնների բարձրներից մէկը յատկացնէ այդ նպատակին:

Թիֆլիսի գնեւաւնահանգապետը առաջարկել է քաղաքապետի պաշտօնակատարին

(200 200 200)

